ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 25 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Հրաչյա Լևոնյանի, Մարի Քոչարյանի, Արարատ Հարությունյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ Հրաչյա Լևոնյանը, Մարի Քոչարյանը, Արարատ Հարությունյանը 2018թ. ապրիլի 7-ին դիմել են Սահմանադրական դատարան:

Դիմողները ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իրենց դիմումում խնդրել են. «ՀՀ Սահմանադրության 1-ին, 6-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածներին և իրավական որոշակիության սկզբունքին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 4-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 1-ին մասով, 38-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերով, 130-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով, 158-րդ հոդվածի 1-ին մասով, 166-րդ, 167-րդ հոդվածներով, 169-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերով, 170-րդ, 178-րդ հոդվածներով, 192-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 195-րդ հոդվածի 3-րդ մասով, 198-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթներին թիվ ԵԿԴ/0834/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 2017թ-ի սեպտեմբերի 28-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2017 թվականի նոյեմբերի 15-ի որոշումներով իրավակիրառ պրակտիկայում տրված ոչ ճիշտ, տարատեսակ մեկնաբանումներ»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

դիմողները հայց են ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ «Արդշինբանկ» ՓԲ ընկերության՝ աշխատավարձի և տուժանքի բռնագանձման պահանջով: Դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 28-ի վճռով հայցը բավարարվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի, Դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0834/02/16 քաղաքացիական գործով կայացրած վճիռը բեկանվել է, գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Դիմողները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նշյալ որոշումը բողոքարկել են վճռաբեկության կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ մերժվել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը: ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից Դատարանի վճիռը բեկանվելուց հետո Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ խնդրո առարկա քաղաքացիական գործն ըն-

դունվել է վարույթ, և գործով նշանակվել է նախնական դատական նիստ՝ 2018 թվականի մարտի 13-ին:

3. Դիմողները գտնում են, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և վճռաբեկ դատարանները չեն կատարել առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ վերլուծություն, չեն կիրառել դրույթներ, որոնք պետք է կիրառեին, թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական և նյութական իրավունքների խախտումներով, ինչը հանգեցրել է օրենքի որոշակիության սկզբունքի խախտմանը:

Դիմողների կարծիքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, հակասելով իր իսկ կողմից նախկինում կայացված նախադեպային որոշումներով արտահայտած դիրքորոշումներին, փոխել է վիճարկվող դրույթների իրավական բովանդակությունը, տալով դրանց այլ՝ օրենքի որոշակիության հետ չհամընկնող իմաստ, իսկ նման անորոշության արդյունքում իրենք զրկվել են իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

4. Ելնելով դիմումի և դատական ակտերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողները չեն սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները: Ընդ որում՝ ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից Դատարանի վճիռը բեկանվելուց հետո Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ խնդրո առարկա քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ, և գործով նշանակվել է նախնական դատական նիստ՝ 2018 թվականի մարտի 13-ին:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ

իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, հենվելով վերոնշյալ սահմանադրական նորմի վրա, սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) **երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,**

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Տվյալ դեպքում դիմողները **չեն սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները,** իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ հիմքի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ**:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Հրաչյա Լևոնյանի, Մարի Քոչարյանի, Արարատ Հարությունյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

25 ապրիլի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/2-13